

ԿԱՐԾԻՔ

Ն. Սուքիայանի «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եկրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ գործող ֆինանսական օրենսդրության բացթողումների, ինչպես նաև դրա կիրառման անկայունության և անարդյունավետության պատճառով այսօր ընդլայնվում են ֆինանսական իրավախստումների աշխարհագրությունը, աճում է իրավախստների թվաքանակը:

Մասնագետները նշում են, որ ոչ միայն ՀՀ-ում, այլև աշխարհի շատ պետություններում գնալով ֆինանսական իրավախստումների թվաքանակը աճում է, որն ըստ երթյան ֆինանսական իրավունքի տեսաբանների մեծամասնության կողմից բացահայտվում է որպես սեփականատիրոջ կողմից իր ունեցվածքը ուրիշին հանձնելու անցանկալի հոգեբանական վարվեցողություն, նույնիսկ, եթե այդ պահանջը սահմանված է օրենքով:

Հայկական պետականության զարգացման ներկա պայմաններում օրակարգի հրատապ հարցերից մեկը բյուջետային կարգապահության և վերահսկողության օրենսդրական ամրագրումն է, որի բացը գործնականում իրեն զգացնել է տալիս իշխանությունների բյուջետային քաղաքականության մշակման և առօրյա իրացման գործընթացներում:

Մաքսային միություններին անդամակցելու ժամանակակից պահանջներին համապատասխան կայունացել է հայկական արժույթի փոխանակային կապը, որի շնորհիվ տնտեսվարող կազմակերպությունները և քաղաքացիները հնարավորություն ունեն երկրի մաքսային սահմաններով ներմուծել և արտահանել շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան ապրանքներ և տրանսպորտային միջոցներ:

Ատենախոսության թեմայի ընտրությունը և դրա արդիականության հիմնախնդիրների համար վերը հիշատակված վերլուծությունները ինքնին վկայում են, թե օրյեկտիվորեն որքան մեծարժեք է ժամանակակից ֆինանսական իրավունքի տեսության ոլորտում ֆինանսահրավական պատասխանատվության և հարկադրանքի իրավական բնույթի և իրավաբանական պատասխանատվության համակարգում վերջինիս որպես պատասխանատվության նոր և ինքնուրույն տեսակի ձանաշման հիմնախնդիրների գիտական լուսաբանումները, ինչպես նաև այն նոր ուղիների փնտրութքը, որը կնապաստի պետության ֆինանսական գործունեության կատարելագործմանը հանրային ֆինանսների իրավական կարգավորման ոլորտում հարկադրանքի և պատասխանատվության, ինչպես նաև ֆինանսական իրավախստումների գործերով վարույթի արդյունավետ նոր միջոցների կիրառմանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը հեղինակին հնարավորություն է ընձեռել կանխորշել հետազոտման նպատակը, որի բացահայտումների համար աշխատանքի հեղինակը առաջարկված տաս խնդիրներին տվել է հիմնավոր պատասխաններ (ատենախոսության 8-9 էջ):

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը ֆինանսական իրավունքի գիտության ոլորտում առաջին փորձերից մեկն է, որը ֆինանսական պատասխանա-

տվության և վարույթի իրավագիտական պահանջներին համապատասխան ամբողջացվել և զիտահետազոտական միասնական ուսումնասիրությունների լույսի տակ ներկայացվել է ֆինանսական պատասխանատվության օբյեկտի առակայությունը, նրա ինքնուրույն գոյության անհրաժեշտությունը բացահայտելով իրավաբանական պատասխանատվության հայեցկարգում այնպիսի նորույթներ, որոնք ներհատուկ են միայն ֆինանսական պատասխանատվությանը:

Ատենախոսական հետազոտության տեսական և գործնական նշանակությունը խիստ անհրաժեշտություն է հայրենական իրավունքի համակարգում ստվերում մնացած ֆինանսական իրավունքի զիտության զարգացման համար: Առաջարկված են մեծածավալ ֆինանսահրավական հիմնախնդիրներ, որոնց ձշգրիտ և հիմնավորված վերլուծություններն ուղղված են ֆինանսահրավական հարկադրանքի, պատասխանատվության, ինչպես նաև ֆինանսական իրավախախումների վարույթի իրավական կարգավորման արմատավորմանը տնտեսական և ֆինանսական համապետական խնդիրներ լուծելիս միաձուլվում են ՀՀ ֆինանսական համակարգին և հանդես են գալիս իշխանության միասնական ֆինանսական գործունեության իրավական բաղադրիչ:

Կարծում ենք՝ ֆինանսական իրավունքի զիտության և ճյուղի որոշակի նորույթներ բացահայտված են հատկապես աշխատանքի վերջին՝ չորրորդ զլյուսում:

Օրենսդրական բարեփոխումների կապակցությամբ հեղինակը մեծ թվով առաջարկություններ է ներկայացրել փոփոխելու «Վարչական իրավախախումների վերաբերյալ օրենսգրքի», ՀՀ «Հարկային օրենսգրքի» իրավական պատասխանատվություն սահմանող մի շարք դրույթներ, որի արդյունքում վերանում է միևնույն իրավախախումնա համար «կրկնակի» պատասխանատվության սկզբունքի խախումնա դեպքերը (տե՛ս, ատենախոսության 164-166 էջերը):

Նկատի ունենալով, որ ֆինանսական իրավունքի հարցերը իմ զիտական հետաքրքրությունների տիրույթից դուրս են, ուստի զրախոսվող աշխատանքի վերաբերյալ կներկայացնեմ մեթոդաբանական և տեսահրավական բնույթի որոշ նկատառումներ:

1. **Ակնկալվող հայեցակարգերի բացակայություն:** Դոկտորանտը, որպես պաշտպանության ներկայացվող դրույթ, նշում է ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական գործունեությունն իրավական կարգավորման գործիքների հիմնավորմանն ուղղված իրավական նոր հայեցակարգերի մշակումների մասին: Պաշտպանության այս դրույթին ծանոթանալիս առաջին խոկ ակնկալիքն այն էր, որ դոկտորական ատենախոսության հավելվածում կգտնեմ առաջարկվող հայեցակարգերի նախագծերը: Մինչդեռ հեղինակը նման հայեցակարգերի նախագիծ չի ներկայացրել կամ հայեցակարգի ձևաչափին մոտ ոլորտի բարեփոխումների ուղղություններ չի մատնանշել:

Հայեցակարգի մշակման մասին պաշտպանության դրույթում հիշատակում ունեցող դոկտորական ատենախոսության առաջնային խնդիրներից է հենց այդպիսի հայեցակարգերի կամ դրա ուղղությունների ներկայացումը, որը կարող է գնահատվել զիտական էական նվաճում:

2. **Պատմահրավական մեթոդի բացակայություն:** Խիստ զարմանք առաջացրեց, երբ ատենախոսության մեթոդաբանության բաժնում չհանդիպեցի պատմահրավական մեթոդի կիրառման մասին հիշատակում: Դոկտորանտի կողմից պատմահրավական մեթոդը չգործածելը համարում եմ նման զիտական աշխատանքի էական բացթողում: Դոկտորական ատենախոսության ձևաչափով իրականացվող

հետազոտությունը չի կարող ամբողջական և համալիր համարվել, եթե վերհանված չեն հետազոտվող ինստիտուտի ծագումնաբանությունը: Գիտական աշխատանքի լրիվության սկզբունքը պահանջում էր դոկտորանտից ուսումնասիրել Հայաստանի առաջին Հանրապետության և Անկախ Հայաստանի պողիտիկ իրավունքում ֆինանսական պատասխանատվության հարցերի կարգավորումները և դրա զարգացման միտումները:

Ըստ որում, կարծեք՝ ֆինանսական պատասխանատվության հարցերը հայկական իրավունքի պատմության չուսումնասիրված հարցերից է, որը պետք է լրացվեր հենց այս աշխատանքում: Կարծում ենք՝ աշխատանքի 23-68 էջերը պետք էր ծանրաբեռնել ոչ թե պետության ծագման մասին տեսապատմական հարցերով, կամ տնտեսական օրենքների, պետության ֆինանսական համակարգի վերաբերյալ հարցերով, այլ ատենախոսն այն պետք է օգտագործեր ֆինանսական պատասխանատվության պատմական զարգացման հարցերի հետազոտման նպատակով:

3. Փորմալ-տրամաբանության օրենքների անտեսումը

3.1. Իրավական պատասխանատվության օրինակով: Աշխատանքի 214 էջում կարդում ենք. «Ընդհանրացնելով տարբեր հեղինակների դիրքորոշումները, նկատենք, որ իրավաբանական պատասխանատվությունը դա պատասխանատվություն է, որն իրականացվում է իրավունքի և պետական օրենքների հիման վրա, ըստ անհրաժեշտության իրավական ակտերն իրականացնելիս»: Նույնարանություն (տավողոգիա) է, երբ նշում է իրավաբանական պատասխանատվությունը դա պատասխանատվություն է:

Ի դեպ, այս բնորոշումը կարդալիս ծագեծ իրավարնկալման տեսանկյունից մերուդաբանական նշանակություն ունեցող հարակից հարց: Հեղինակը բնորոշման մեջ օգտագործում է. «պատասխանատվությունն իրականացվում է իրավունքի և պետական օրենքների հիման վրա»: Ցանկալի է լսել ատենախոսի պարզաբանումները իրավաբանական պատասխանատվության թեմայի շրջանակներում, իրավունքի և պետական օրենքի տարանջատման հիմնավորումների մասին: Իրավաբանական պատասխանատվությունը, որը կապվում է պետական հարկադրանքի հետ, արդյոք կարող է իրացվել պետական օրենքներից դուրս:

3.2. Ֆինանսական հարկադրանքի օրինակով: Պաշտպանության ներկայացվող դրույթներում հեղինակը նշում է. «ֆինանսահրավական հարկադրանքը կարելի է բնութագրել որպես ֆինանսահրավական նորմերով սահմանված հարկադրանքի միջոցների ամբողջություն»:

Նախ այս բնորոշման մեջ ևս առկա է նույնարանություն, երբ հարկադրանքը բացահայտվում է նույն «հարկադրանքի միջոց» հասկացությամբ:

Երկրորդ՝ ֆինանսական հարկադրանքի բնորոշումը չի բխում հեղինակի կողմից տրվող առավել ընդհանուր՝ իրավական հարկադրանքի ընդհանուր բնորոշումից: Աշխատանքի 101-րդ էջում նշում է. «իրավական հարկադրանքը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ հարկադրանքի կիրառման լիազորությունների համալիր է ...»:

Հեղինակը նշում է, որ ֆինանսական հարկադրանքին ներհատուկ են այն բոլոր առանձնահատկությունները, որոնցով բնութագրվում է իրավական հարկադրանքը (էջ 103): Դոկտորանտը ֆինանսական հարկադրանքը համարում է հարկադրանքի միջոց, իսկ իրավական հարկադրանքը՝ լիազորությունների համալիր:

Տրամաբանությունը հուշում է, որ հատուկ հասկացության բնորոշումը պետք է համապատասխանի ընդհանուր բնորոշման տրամաբանությանը: Վերջին հաշվով՝ ֆինանսասական հարկադրանքը դա լիազորությունների համալիր է, թե՛ ինչ – որ «միջոց» է:

Երրորդ՝ ֆինանսասական հարկադրանքի բնորոշման մեջ նշված են միայն այն կիրառող սուբյեկտը և նպատակները, սակայն այս հասկացության բուն էությունը կազմող հատկանիշները նշված չեն:

Ավելին՝ ֆինանսասական հարկադրանքի հասկացության մեջ նշված չեն նաև այն, թե այդ հարկադրանքը ինչ տեսակի նորմատիվ իրավական ակտով կարող է սահմանվել: Այս սկզբունքային հարցում անորոշությունը կրկնապատկվում է, եթե ատենախոսը նշում է. «Ֆինանսասական հարկադրանք սահմանող նորմատիվ իրավական ակտերի ...»: Ստեղծվում է տպավորությունը, որ ֆինանսասական հարկադրանքի միջոցներ կարելի է սահմանել ցանկացած նորմատիվ իրավական ակտով, այդ թվում՝ ենթաօրենսդրական ակտով: Մինչդեռ սահմանադրական իրավունքի տեսանկյունից պետական հարկադրանքի միջոցները կարող են սահմանվել բացառապես ֆորմալ օրենքով:

4. Գիտական նորությունների (առանջին անգամ հետազոտելու) մասին խնդրագնահատականներ: Աշխատանքում հաճախ են հնչում այս կամ այն հասկացություններն առաջին անգամ հետազոտելու մասին ձևակերպումներ: Այսպես՝ ատենախոսը նշում է. «Գիտական հետազոտությունում առաջին անգամ հեղինակված է իրավատնօրինություն (յուստիցիա) հասկացությունը, որից սկիզբ են առնում ինչպես ֆինանսահրավական խախտումների գործերով «վարույթ», այնպես էլ «գործընթաց (պրոցես)» հասկացությունները: Իրավատնօրինությունն իրավագիտության մեջ առաջին անգամ հետազոտվում է որպես օրենքով կամ այլ իրավական ակտերով համապատասխան պետական մարմնին վերապահված այնպիսի լիազորությունների համակցություն, որոնց ուժով իրավագոր մարմիններն իրենց իրավասության շրջանակներում իրավունք ունեն քննարկելու և զնահատելու իրավական վեճը» (էջ 16):

Իրականում այս հասկացությունները ուսումնասիրվել են հայկական իրականության մեջ, ավելին՝ «յուրիստիկցիա», «իրավաբանական վարույթ» և «գործընթաց» հասկացությունները ներկայացվել են նույնիսկ դասագրքերում: Օրինակ՝ «Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. Խմբ. Ա. Ղամբարյան, Ս. Մուրադյան, (վերահրատարակվել է՝ 2013, 2016, 2018)» ուսումնական ձեռնարկում իրավաբանական վարույթին նվիրված է առանձին գլուխ, որտեղ ներկայացվում են յուրիստիկցիոն իրավաբանական վարույթի մի շարք հարցեր:

5. «Պատժամիջոց» հասկացությունը. Ֆինանսական, թե՛ քրեական իրավունքի եզրույթ: Հեղինակը քննադատում է, որ ՀՀ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 61-րդ հոդվածում օգտագործում է «պատժամիջոց» հասկացությունը: Քննադատության հիմնական պատճառաբանությունն այն է, որ ԿԲ-ն արդարադատության մարմին չէ, իսկ «Պատժամիջոցներ» կիրառելու իրավունքը վերապահված է միայն դատարաններին (ՀՀ քրեական օրենսդրության 48-րդ հոդ. 1-ին մաս), որը իրականացվում է «դատարանի դատավճռով պետության անունից, հանցագործության համար մերավոր ճանաչված անձի նկատմամբ»:

Նախ հեղինակը կարծեք թե՝ «պատժամիջոց» հասկացությունը համարում է բացառապես քրեական իրավունքի եզրույթ, որի պայմաններում նա անտեսում է իրավական հասկացությունների մեկնաբանման ձյուղային ինքնավարության

սկզբունքը, որի համաձայն՝ միևնույն իրավական տերմինը տարբեր իրավունքի ճյուղերում կարող է օգտագրծվել իր կարգավորման առարկայի առանձնահատկությունների տեսանկյունից:

Երկրորդ՝ հեղինակը հակասում է ինքն իրեն, եթե մի կողմից՝ պաշտպանության ներկայացվող դրույթում հիմնավորում է «պատժամիջոց» հասկացության քրեական իմաստը, մյուս կողմից՝ աշխատանքի եզրակացության մեջ բազմաթիվ անգամ օգտագործում է «ֆինանսական պատժամիջոց» ձևակերպումը (Էջ 364):

Վերոնշյալ նկատառումները կրում են մասնակի բնույթ և չեն նսեմացնում աշխատանքի ընդհանուր դրական արժեքը:

Սեղմազիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Ն. Սուրբիայանի ատենախոսության հիմնական դրույթները բավարար չափով արտացոլված են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում: Ատենախոսությունը կարող է զնահատվել իբրև էական նվաճում ֆինանսական իրավունքի տեսության բնագավառում:

Ելնելով վերոնշյալից, կարծում եմ՝ Նազելի Գառնիկի Սուրբիայանի «Ֆինանսական պատասխանատվության իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով դոկտորական ատենախոսությունն ամբողջական և ավարտուն գիտական հետազոտություն է, համապատասխանում է ներկայացվող պահանջերին, իսկ հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան

Ա.Ա. Ղամբարյան

Ա.Ա. Ղամբարյանի ստորագրությունը հաստատում է՝
Հայ-Ռուսական Համալսարանի
Գիտական քարտուղար՝
Բ.Գ.Բ.

Ա.Ա. Ղամբարյան



23.06.2020թ.